

ՓՈՂՈՑՆԵՐ ՈՒ ՊԱՏԵՐ

ՀՈՂԻ ԿԱՐՕՏ

Փողոցներ՝ աճալի ու անտէր,
 Փողոցներ ու պատեր՝ աներազ,
 Ես հիմայ կը յիշեմ մութը ձեր
 Ու մութին մէջ իմ հին առօրեայ:

Ես հիմայ կը յիշեմ թէ ինչպէս
 Յուսացի պատրանքի մը համար
 Ու սրտիս զարկին տակ առած ձեզ՝
 Մընացի մեղաւոր ու չըւար:

Ես հիմայ կը յիշեմ փողոցներ,
 Փողոցներ ու պատեր փրլատակ,
 Գիշերներս իմ անտուն եւ անտէր,
 Եւ արցունքս որ դողաց շարունակ:

Խեղճ էիք, խեղճ էի նաեւ ես,
 Ձեր ցուրտին, ձեր սովին մէջ ա՛յնքան,
 Ձունէի ո՛չ մէկ տենդ քրապէս,
 Ձիս կանչող ո՛չ մէկ զարկ սեփական:

Փողոցներ՝ դուք անդիլջ քաղաքի
 Ու պատեր տուներու ամբարձակ,
 Ի՞նչ տըւիք ինծի դուք որ ապրի,
 Որ մեծնայ դեռ իմ ջինջ կուրծքիս տակ...:

... Դուք արդէն հեռու էք, շատ հեռու,
 Գըրկէն մէջ փոթորկոտ անցեալի, —
 Հասեր եմ ես խաղաղ լոյսերու
 Եւ անցեր սըրտերով վիթխարի...:

Ձիս հիմայ փողոցներ նորանոր՝
 Կը կըրեն, կը դըրկեն շարունակ,
 Ու պատեր, ու տուներ ամէն օր
 Կը ժրպտին իմ վարար շունչիս տակ:

Փողոցներ աճալի եւ անտէր,
 Ու պատեր, ու պատեր աներազ,
 Բանտեր եմ ես հիմայ մութը ձեր
 Ու՛րացեր եմ իմ նոր առօրեայ:

Քաղաքին մէջ այս Կեժ ու ծանօթ,
 Դուք արդէն կորեր էք ու չըկաք.
 Դուք արդէն դարձեր էք հին կարօտ,
 Ու հինին մէջ մեռնող յիշատակ...:

Հին օրերէս մընացորդ, յիշատակի չափ աղուոր,
 Իմ պապերուս պապերէն հասած բառերն այս
 անգիւն՝

Հոգիէս ներս կը առնէն արձագանդի շշտերով՝
 — Սիրէ՛ հողը հայրենի:

Յաւերուս հետ, եւ յոյսիս անհունին մէջ ալեկոծ՝
 Ձեմ մոռնար ես յիշել միշտ բառերն սիրտիս եր-
 կիւղած,
 Որոնք աղբիւր են լոյսի ու կը մընան միշտ առ-
 կած,

Սիրե՛լ հողը հայրենի:

Հարկ է սիրել, միշտ սիրել հին աւանդը պապե-
 րու,
 Սիրել եւ հողը ոսկի, ուր կայ հըրաշքը միտքին,
 Ըստեղծագործ հոգիին որ դարէ դար կը խօսի՝
 — Սիրէ՛ հողը հայրենի:

Մընալ օտա՛ր հողի վրայ ու սիրել հողն հայրենի.
 Ի՞նչ յաղթութիւն է վըսեմ, անմեկնելի՛ բերկ-
 րութիւն,
 Հասնելէ վերջ երազիդ, երբ ան քեզի միշտ ըսէ՝
 — Ապրէ՛ հողը հայրենի:

Ապրի՛լ հողը հայրենի ու գըրկել զայն վերջնօ-
 րէն,
 Օտարացած, քայց անոր որոնումովը մեծցած,
 Բազուկներով տենդալի, եւ ըզզալ թէ երջանիկ
 Կեանքը դեռ նոր կը սկըսի՝ հողին վըրայ հայ-
 րենի:

Միկոսիա 1949

Մ. ԳԵՐՄԱՆԻԿԵԱՆ

*

Երեւան

ԱՐԱՄ ԱՐՄԱՆ